

## ՀՅՅՐԵՐ ԵՒ ԶՍԻՍԿՆԵՐ

### I

Հ'ը, ինչ է Պետր, դեռ չեն երևում:

Այս աստղը քառասունն անց մի տղամարդ էր, որ 1859 թ. մայիսի 20-ին, գլուխը բաց, փոշոտ վերարկուով ու վանդանկար վարտիկ հագած, դուրս եկաւ \*\*\* տանող խճուղու վրայ շինած քարվանսարալի ցածրիկ պատշգամբն ու հարցրեց իւր ծառային: Ծառան երիտասարդ էր, ուռած թշերով, սպիտակաուռն աղուամաղը ծնօտին ու մանրիկ մարած աչքերով: Ամեն բանից — թէ փիրուղէ օղից, թէ օժած բազմագոյն մազերից, թէ քաղաքավարի շարժումներից, մի խօսքով ամեն բանից երևում էր, որ ծառան նորագոյն, կատարելագործուած սերնդի մարդ էր: Նա ներողամտաբար նայեցաւ ճանապարհի երկարութեամբ և պատասխանեց.

—Ոչ, չեն երևում:

—Չեն երևում,—կրկնեց աղան:

—Չեն երևում,—նորից պատասխանեց ծառան:

Աղան հառաչեց ու նստաւ փոքրիկ նստարանի վրայ: Մինչ նա ոտները տակը՝ ծռած նստած է ու մտախոհութեամբ չորս կողմը նայում, մենք ընթերցողին ծանօթացնենք նրա հետ:

Նրա անունը՝ Նիկալայ Պետրովիչ Կիրսանով է: Քարվանսարից մի 15 վերստ հեռու գտնուում է նրա պատուական կալուածքը, որ բաղկացած է երկու հարիւր հոգուց, կամ ինչպէս նա ինքը, գիւղացոց ու իւր հողի սահմանները որոշելուց և ազարակո՞հաստատելուց լետոյ ասում էր, երկու հազար դեսեատին՝ հողից: Նրա հայրը, որ 1812 թ. պատերազմին մասնակցած զինեռալ էր, մի կիսակիրթ, կոպիտ, բաց բարեբաւ մարդ, իւր բոլոր կեանքը ծառայութեան մէջ էր անցկացրել, նախ զուհի, ապա և վաշտի հրամանատար էր եղել:

և շարունակ ապրում էր դաւառում, ուր իւր աստիճանի շնորհիւ բաւական ազդեցիկ դեր ունէր: Նիկալայ Պետրովիչը իւր եղբոր Պաւլի նման, որի մասին լետոյ կխօսենք, ծնուել էր հարաւային Ռուսիայում և մինչև տասնչորս տարեկան հասակը տանն էր դաստիարակութիւնը ստացել՝ էփանաղին դաստիարակներով, համարձակ, բայց շողմարար ազիւտանտներով և ուրիշ զինուորական զանազան անձերով շրջապատուած: Նրա մայրը, որ Վալեաղինների տոհմիցն էր, և աղջիկ ժամանակը Agathe, իսկ գեներալի կին լինելուց լետոյ Ադաֆոկլէա Կոլովինիչնա Կիրսանովա էր դարձել, բարի կին էր, փառահեղ գլխադարձեր ու խշխշած մետաքսէ շորեր էր հագնում, և կեղեցում խաչ համուրելու առաջինը ինքն էր մօտ գալիս, խօսում էր շատ ու բարձր, թող էր տալիս որ առաւօտները երկիւսները ձեռքը համաւարեն, իսկ երեկոները օրհնում էր նրանց, — մէկ խօսքով քէֆին ապրում էր: Նիկալայ Պետրովիչը, չնայելով որ ոչ միայն մի առանձին քաջարտութիւն չուներ, այսպէս մինչև անդամ վախկոտի անուն էր ստացել, որպէս գեներալի որդի, պէտք է, իւր եղբոր Պաւլի նման, զինուորական ծառայութեան մտնէր. բայց հէնց աչն օրը, որ տեղեկութիւն եկաւ, թէ նա ծառայութեան մէջ ընդունուած է, ոտքը կտորուեց և երկու ամիս անկողնին ծառայելուց լետոյ ողջ կեանքը «կաղլիկ» էլ մնաց, Հայրը ձեռք վերցրեց նրանից ու թող տուաւ, որ ուրիշ գործի լինի: Հէնց որ տասնութ տարեկան եղաւ, հայրը նրան Պետերբուրգ տարաւ ու համալսարան տուեց: Ըն իսկը այդ միջոցին եղբայրն էլ գուարդիալի մէջ սպայութիւն ստացաւ: Երիտասարդները մէկ տան մէջ ապրում էին միասին իրենց մօր կողմից ազգական Նիլա Կալիաղինի հեռաւոր հսկողութեան տակ, որ մի նշանաւոր պաշտօնեալ էր: Նրանց հայրը վերադարձաւ իւր գործին և իւր ամուսնու մօտ, և երբեմն-երբեմն միայն մի քառորդ թերթ գորչ թղթի կտոր էր ուղարկում, որ լցրած էր լինում գրադրի յատուկ խոշոր-խոշոր գրերով: Այդ թղթի կտորների տակ հոգածութեամբ ստորագրած էր լինում. «Պիետրը Կիրսանոֆ, գեներալ-մալիօր»: Նիկալայ Պետրովիչը 1835 թ. կանդիտատի կոչումով աւարտեց համալսարանը, և նոյն տարին էլ գեներալ Կիրսանովը, որ անաջող զօրախաղ անելուն համար արձակուած էր պաշտօնից, կնոջը հետ ընկալութեան համար Պետերբուրգ եկաւ: Նա նոր էր Տաւրիկեան ալդու մօտ տուն

վարձել ու անգլիական ժողովարանի էլ անդամ գրուել, որ չանկարժ կաթուածահար եղաւ, մեռաւ: Եւստով Ազաֆովիչէա Կողմինիչնան էլ հետեց նրան.—նա չկարողացաւ ընտելանալ մալրաքաղաքի խուլ կեանքին. անցեալ կեանքի կարօտը նրան մաշեց: Իսկ Նիկայա Պետրովիչն արդէն, դեռ ծնողները կենդանութեանը և ի մեծ ցաւ նրանց, սիրահարուել էր իւր տանտիրոջ, պաշտօնեայ Պրեպալաւենսկու աղջկանը, որ մի սիրունատես ու, ինչպէս ասում են, դարդացած աղջիկ էր՝ —նա ամսագրերի մէջ «գլխութիւն» բաժնի լուրջ լօղուածներն էր կարդում: Հէնց որ սգոյ օրերն անցան, պսակուեցաւ և, պետական կալուածոց մինխտրութիւնը թողնելով, ուր հալըր հովանաւորների շնորհիւ ղետեղել էր նրան, իւր Մաշայի հետ երջանիկ օրեր էր անց կացնում նախ Անտառաչին ինստիտուտի մօտակայքը վարձած ամառանոցում, ապա քաղաքում, ուր մաքուր աստիճաններով ու սառն ընդունարանով փոքրիկ ու պատուական բնակարան էր վարձել, վերջապէս դիւղում, ուր նա վերջնական կերպով բնակութիւն էր հաստատել և ուր շուտով մի որդի ունեցաւ, Արկադի անուանով: Ամուսինները խաղաղ ու շատ լաւ կեանք էին վարում՝ —համարեա երբէք միմեանցից չէին հեռանում, միասին կարդում էին, միասին չորս ձեռքով դաշնամուր ածում, երկուսով երգում: Կինը ծաղիկներ էր խնամում և հաւանոցի վրայ հովում, իսկ ինքը երբեմն որսի դնում և պարապում էր տնտեսութեամբ: Իսկ Արկադին աճում էր հա աճում—նոյնպէս լաւ ու հանդարտ: Տասը տարին երաղի պէս անցաւ: 1847-ին Կիրսանովի կինը վախճանեցաւ: Կիրսանովը հաղիւ դիմացաւ աղ հարուածին և մի երկու շաբաթուայ մէջ ալկորեցաւ: Վիշտը փոքր ինչ մոռանալու համար ուղում էր արտասահման գնալ... բայց վրայ հասաւ 48 թուականը: Ակամա վերադարձաւ գիւղ և բաւական երկար ժամանակ անզօրժ մնալուց լետոյ սկսաւ տնտեսական բարեփոխութիւններով ղաաղուել: 55 թուին նա որդուն համալսարան տարաւ. երեք ձմեռ համարեա թէ առանց տնից դուրս գալու ապրեց նրա հետ՝ աչխատելով բարեկամութիւն հաստատել Արկադիի նորատի ընկերները հետ: Վերջին ձմեռս չէր կարողացել դնալ,—և ահա 1859 թ, մալխին նրան տեսնում ենք բոլորովին սպիտակած, փափրիկ և փոքր ինչ կզացած՝ —նա իւր որդու ճամբան է նա-

լում, որը, ինչպէս մի ժամանակ ինքը, կանդիտատի կոչում էր ստացել:

Մտան վախճանութիւնից զրդուած, կամ գուցէ և չցանկանալով աղալի աչքի առաջ լինել, դարպասի տակը մտաւ ու չիբուխը վառեց: Նիկալայ Պետրովիչը գլուխը քաջ դցած նալում էր պատշգամբի խարխուլ աստիճաններին՝—մի խոշոր խալտապղէտ ճուռ ծանր-ծանր ման էր գալիս աստիճանների վրայ ու իւր խոշոր, դեղին ոտներով բարձր-բարձր թխթխկացնում. մի աղտոտուած կատու, կողքը պատշգամբի վանդակին դէմ տուած, անբարեմտութեամբ նալում էր նրան: Արևն ալրում էր. քարվանսարայի կիսամութ նախասենեակից նոր թխած սև հացի հոտ էր գալիս: Մեր Նիկալայ Պետրովիչը ասուրջներէ մէջ էր թաղուած: «Որդիս... կանդիտատ... Արկաշան...» շարունակ պտղտ էր գալիս նրա գլխի մէջ: Նա ուղում էր մի ուրիշ բանի վրայ միտք անել, բայց դարձեալ նոյն մտքերն էին գալիս խոնւում: Միտքն ընկաւ լուսահոգի կինը...: «Չարժանացաւ» թախծութեամբ շնչաց նա...: Մի հաստ կապտառ աղանի թուռ եկաւ ճանապարհի վրայ ու շտապով գնաց ջրհորի մօտ լճակից ջուր խմելու: Նիկալայ Պետրովիչը սկսաւ աղանուն նալել, բայց ականջին արդէն հասել էր մօտեցող անիւների ձայնը...

—Հէնց գիտենաս նրանք են,—ասաց ծառան դարպասի տակից գուրս գալով:

Նիկալայ Պետրովիչը վեր թուռ տեղից և աչքը ճանապարհին ձգեց: Փոստի ձի լծած եռաձի տարանտաս երևաց. կառքի մէջ փալեցին ուսանողական զլխարկի շրջապատը, թանկագին դէմքի ծանօթ գծերը...

—Արկաշա, Արկաշա,—կանչեց Կիրսանովը, և վազեց, և ձեռները թափահարեց...

Մի քանի րոպէ անց նրա շրթունքները հպած էին երիտասարդ կանդիտատի անմօրուս, փոշոտ ու արևառ թշին:

## II

—Հալրիկ, թող մի շորերս թափ տամ,—ճանապարհից փոքր ինչ խզուած, բայց պատանեկական ղիլ ձայնով ասում էր Արկաղին՝ ուրախ-դուարթ հօր փաղաքշանքին պատասխան տալով,—տես, քեզ էլ կիոշոտեմ:

—Վնաս չունի, մնաս չունի,—խանդակաթ ժպիտն երեսին ասում էր Նիկալայ Պետրովիչը, և մի երկու անգամ ձեռքով խփեց որդու վերարկուի օձիքին ու իւր վերարկուին: —Հապա մի տեսնեմ, հապա մի տեսնեմ,—ասաց նա հեռու քաշուելով, ու լետոյ անմիջապէս շտապ քայլերով դէպի քարվանսարան գնաց խօսելով. «ահա այստեղ, այստեղ: Շուտով ձիանը պատրաստեցէք»:

Նիկալայ Պետրովիչը իւր որդուց աւելի լուղուած էր երևում. ասես թէ փոքր ինչ չմեկ էր, փոքր ինչ չչկուել:

Արկադին նրան կանգնեցրեց:

—Հայրիկ,—ասաց նա,—արի քեզ ծանօթացնեմ իմ լաւ բարեկամ Բազարովի հետ, որի մասին այնքան շուտ-շուտ դրել եմ քեզ: Նա այնքան բարի էր, որ համաձայնեցաւ մեզ հետ գալ:

Նիկալայ Պետրովիչը շտապով շուռ եկաւ և մօտենալով մի երկարահասակ պարոնի, որ փնջաւոր երկայն վերնաշորը հազին նոր էր կառքից դուրս եկել, պինդ հուպ տուեց նրա մերկ, կարմիր ձեռքը. սակայն օտարականը իւր ձեռքը իսկոյն չմեկնեց նրան:

—Սրտանց ուրախ եմ,—ասաց նա,—և շնորհագարտ, որ ուղեցել էք մեզ այցելել. լուսամ... խնդրեմ ձեր անունհայրանունն ասէք:

—Սեզենի Վասիլիս,—ծով, բայց այրական ձայնով պատասխանեց Բազարովը և լետ անելով իւր վերնաշորի օձիքը, իւր ամբողջ դէմքը ցոլց տուեց Նիկալայ Պետրովիչին: Նրա դէմքը երկայն էր և լղար, լախ ձակատով, վերը լախ իսկ ներքեւ սուր քթով, կանաչաւուն խոշոր աչքերով և աւաղադոյն, կախ ընկած այտօրուաներով. հանդարտ ժպիտը կենդանութիւն էր տալիս նրա դէմքին, որ ինքնավստահութիւն ու խելք էր արտայայտում:

—Յուսամ, սիրելի Սեզենի Վասիլիչ, մեզ մօտ չէք ձանձրանայ,—չարունակեց Նիկալայ Պետրովիչը:

Բազարովի բարակ չրթունքները հազիւ շարժուեցան. բայց նա ոչինչ չպատասխանեց և միայն փոքր ինչ զլխարկը վերցրեց: Նրա երկայն և խիտ մուգ-դեղձան մազերը չէին ծածկում ընդարձակ գանգի խոշոր ուռուցները:

—Ուրեմն ինչպէս անենք, Արկադի, —նորից խօսեց Նի-

կալայ Պետրովիչը որդուն դառնալով,—ձիանը հիմք լծե՛ր տանք։ ԹՔ կուղէ՛ք հանգստեանալ։

—Տանը կհանգստանանք, հայրիկ, ասա թող լծեն։

—Այս բոպէիս, այս բոպէիս,—վրայ տուեց հայրը։—Ե՛լ, Պետր, լսեցիր։ Դէ, ախպեր ջան, կարգադրիր, շուտ։

Պետրը, որ որպէս կատարելագործուած ծառայ, իւր երիտասարդ աղալի աջը չէր առել, հապա միայն հեռուից գլուխ էր տուել, նորից դարպասի ներքև անհետացաւ։

—Ես ուղեկառքով եմ եկել, բայց ձեր տարանտասի համար էլ երեք ձի կալ,—հոգածութեամբ ասում էր Նիկայայ Պետրովիչը, մինչ Արկադին ջուր էր խմում երկաթէ թասից, որ բերել էր քարվանսարալի տանտիկինը, իսկ Բազարովը չիքուխը վառեց և մօտեցաւ կառապանին, որը ձիանն էր լետ անում։

—Միայն իմ կառքս երկու հոգու տեղ ունի, չդիտեմ թէ բարեկամիդ ինչպէս անեմ ..

—Նա տարանտասով էլ կգալ,—ցած ձայնով ասաց Արկադին։—Խնդրեմ նրա համար շատ հոգս մի քաշիլ։ Հրաշալի երիտասարդ է, դարմանալի պարզ—ալ, կտեսնես։

Նիկայայ Պետրովիչի կառապանը դուրս բերեց ձիանը։

—Դէ, շարժուիր, հաստամօրուս,—ասաց Բազարովը կառաւարին։

—Լսեցիր, Միտիւլսա,—վրայ բերեց միւս կառապանը, որ ձեռները մուշտակի քամաքի ձեղքուածքին դրած կանգնած էր ալդտեղ,—աղէն ինչ ասաց։ Հէնց հաստամօրուս էլ ես, որ կաս։

Միտիւլսան միայն գլխարկը շարժեց և քրտնքած միջնակ ձիու վրայից քաշեց, հանեց սանձը։

—Դէ, դէ, տղերք, դուք էլ օգնեցէք,—բացականչեց Նիկայայ Պետրովիչը։—Ընծայ կտամ։

Մի քանի բոպէից ձիանը լծած պատրաստ էին. հայր ու որդի ուղեկառքը նստան. Պետրը կառապանի կողքին տեղաւորուեցաւ. Բազարովը թռաւ մտաւ տարանտասը, գլուխը թաղեց կաշուէ բարձի մէջ,—և երկու կառքերն էլ առաջ շարժուեցան։

### III

—Ուրեմն աւարտեցիր, էլիք. այժմ կանդիտատ ես, ու

տունն ես վերադառնում, — ասում էր Նիկալայ Պետրովիչը ձեռքը Արկադիի երբեմն մէջքին և երբեմն ծնկանը կայցնելով — Վերջապէս:

— Ի՞նչպէս է, հօրեղբայրս լմաւ է, — հարցրեց Արկադին, որ չնայելով անկեղծ, համարեա մանկական ուրախութեանը, որով լցուած էր, ուղում էր շուտով արդ լուզիչ խօսակցութիւնը սոսկական խնդիրների վրայ դարձնել:

— Առողջ է: Ուղում էր հետս քեզ դիմաւորելու գալ, բայց չգիտեմ ինչն լետոյ. միտքը փոխեց:

— Իսկ դու վաղձեց է ինձ սպասում էիր:

— Մօտ հինգ ժամ կլինի:

— Բարի հայրիկ:

Արկադին աշխուժութեամբ շուռ եկաւ հօր կողմը և չլմփալի համբուրեց նրա երեսը: Նիկալայ Պետրովիչը կամացուկ ծիծաղեցաւ,

— Քեզ համար ի՞նչ ձի եմ պատրաստել, — սկսեց նա. — ալ, կտեսնես: Սեննակիդ պատերն էլ պատտառել եմ տուել:

— Բազարովի համար էլ կան սեննակ:

— Նրա համար էլ կգտնենք:

— Խնդրեմ, հայրիկ, քաղցր աչքով նայիր նրան. Չեմ կարող խօսքով համկացնել, թէ ինչքան գնահատում եմ նրա բարեկամութիւնը:

— Նորերս ես հետը ծանօթացել:

— Նորերս:

— Գիտեմ որ անցեալ ձմեռ տեսած չեմ, ինչո՞վ է պարագում:

— Նրա գլխաւոր առարկան — բնական գիտութիւններն են: Բայց նա ամեն բան էլ գիտէ: Սկող տարի ուղում է բրժչկի քննութիւն տալ:

— Հ'ը, բժշկական բաժնումն է, — նկատեց Նիկալայ Պետրովիչն ու լռեց: — Պետր, — ասաց նա ու ձեռքը մեկնեց: — Այս եկողները մեր գեղացիները հօ չեն:

Պետրը աղալի ցոլց տուած կողմը նայեցաւ: Մի քանի սալեր, սանձարձակ ձիեր լծած, նեղ ճանապարհով արագութեամբ առաջ էին գլորւում: Ամեն մէկ սալի մէջ մէկ-մէկ, կամ շատ-շատ երկու-երկու հոգի էին նստած, մուշտակի կրծքները բաց:

— Այո, մեր գեղացիներն են, — ասաց Պետրը:

—Այդ ձևը են գնում, քաղաք են գնում, ինչ են անում:

—Պէտք է ենթադրել, որ քաղաք են գնում: Օղետուն,  
—աւելացրեց նա՝ արհամարհանքով և թեթևակի լիսառապանի  
կողմը՝ ծոռելով, կարծես նրան վկայէր կանչում: Բայց սա  
տեղիցն անդամ չչարժուեց՝ դա հին մարդկանցից էր և նոր  
աշխարհահայեացիների կուսակից չէր:

—Այս տարի մեծ ղալմաղալի մէջ՝ եմ գիւղացիներին հետ,  
—շարունակեց Նիկալայ Պետրովիչը՝ որդուն դառնալով:—  
Տուրք չեն վճարում: Ի՛նչ կանես:

—Իսկ վարձու մշակներից գո՛հ ես:

—Այո, —ատամների արանքիցն ասաց Նիկալայ Պետրո-  
վիչը:—Ցաւն ասն է, որ նրանց էլ տակը լցնողներ կան և  
դեռ մի առանձին ջանք էլ ցույց տուած չկան: Զիտ սարքերը  
փչացնում են: Ասենք վարածները վատ չէր: Էհ, ձուկը ջրում  
կմեծանալ: Բայց միթէ այժմ տնտեսական գործերը հետաքրք-  
րում են քեզ:

—Ցաւն ասն է, որ դուք ստուերոտ տեղ չունիք, — նկա-  
տեց Արկաղին առանց վերջի հարցման պատասխանելու:

—Հլուսիսակին կողմը պատշգամբի վրայ մի մեծ հովանոց  
եմ շինել տուել, — ասաց Նիկալայ Պետրովիչը:— այժմ կարելի  
է բաց օդումն էլ ճաշել:

—Այդ բանը մի քիչ ամառանոցի կերպարանք պիտի  
տալ... Էհ, ասենք, այդ բոլորը չնչին բաներ են: Բայց ի՛նչ  
օդ է այստեղի օդը: Ի՛նչ անող հոտ: Չիշտ եմ ասում, ինձ  
թւում է, թէ աշխարքիս երեսին այստեղրանքի նման անուշ  
հոտ ունեցող երկիր չկալ: Այստեղի երկրինքն էլ...

Արկաղին լանկարծ կանգ առաւ, ծուռ հայեացք ձգեց  
ետեղ և լռեց:

—Իհարկէ, — ասաց Նիկալայ Պետրովիչը, — այստեղ եռ  
ծնուել, այդ պատճառով այստեղի ամեն բանն էլ մի ջոկ բան  
է թուալու...

—Ձէ, հալրիկ, ասենք այդպէս չէ, մարդս սրտեղ էլ  
ծնուած լինի, նրա համար ամեն տեղ էլ մէկ բան է...

—Ախր...

—Ձէ, բոլորովին մէկ բան է:

Նիկալայ Պետրովիչն աչքի ծալրովը որդուն նայեցաւ, և  
կառքը կէս վերստի չափ անցած կլինէր, որ նորից խօսակ-  
ցութիւն սկսուեց:

—Չգիտեմ գրել եմ թէ չէ, որ քու դայեակդ, Եզորոշեան մեռաւ,—սկսեց Նիկալայ Պետրովիչը:

—Միթէ, Խեղճ պառաւ, Իսկ Պրակոֆիչը կենդանի է:

—Կենդանի է և ամենեին էլ փոխուած չէ, էլի շարունակ դողովում է, Առ հասարակ Մարինոում մի առանձին փոփոխութիւն չես նկատիլ:

—Էլի միենոյն գործակատարն է:

—Չէ, մենակ այդ է, գործակատարին փոխել եմ: Վճռել եմ ճորտութիւնից ազատուած ընդոճիճներէրց մօտս մարդ չպահել, գոնէ նրանց ոչ մի պատասխանատու պաշտօն չտալ: (Արկաղին աչքով Պետրին ցոյց տուաւ): Il est libre, en effet,—ցած ձայնով նկատեց Նիկալայ Պետրովիչը,—բայց ախր նա սենեկապան է: Այժմ իմ գործակատարս քաղաքացի է. ինչպէս երևում է աչքաբաց մարդ է: Տարեկան երկու հարիւր լիստն ուռքլի եմ նշանակել: Ասենք,—աւելացրեց Նիկալայ Պետրովիչը ճակատն ու ունքերը շփելով, որը միշտ նրա ներքին շփոթութեան նշան էր,—հէնց նոր ասացի, որ Մարինոում փոփոխութիւն չես տեսնիլ...: Այդ լիովին ուղիղ չէ: Պարտքս եմ համարում քեզ նախազգուշացնելու, որ թէպէտ...

Նա մի րոպէ կմկմաց ու լետոյ շարունակեց ֆրանսերէն:

—Խստապահանջ բարոյազէտը իմ անկեղծութիւնս կարող է անտեղի համարել, բայց նախ որ այդ բանը թագցնել կարելի չէ, իսկ երկրորդ էլ քեզ լայտնի է, որ միշտ առանձին սկզբունքներ եմ ունեցել հօր և որդու լարաբերութեան մասին: Ասենք դու իրաւունք կունենաս ինձ դատապարտելու: Այս տարիքում...: Մէկ խօսքով, ախ... ախ աղջիկը, որի մասին դու, հաւանօրէն, արդէն լսած կլինիս:

—Ֆինիչկան, —անհոգաբար հարցրեց Արկաղին:

Նիկալայ Պետրովիչը կարմրեց:

—Ի սէր Աստուծոյ անունը բարձր մի տալ...: Այո... Նա այժմ իմ մօտս է ապրում: Տանը երկու մանր սենեակներ կալին...: Աջտեղ եմ տեղաւորել: Ասենք այդ ամենը կարելի է դեռ փոխել:

—Ինչի, հալրիկ, ինչ հարկ կալ:

—Բարեկամդ մեզ մօտ հիւր է լինելու... ամօթ է...:

—Խնդրեմ Բազարովի վերաբերմամբ մի անհանգստանալ:

Նա արդպիսի բաներից բարձր է:

—Է՞հ, դու էլ—ասաց Նիկալայ Պետրովիչը.—Ցաւն արն է, ջուկ տունն էլ լարմար չէ:

—Ձարմանալի մարդ ես, հարիկ, կարծես թէ դու ներողութիւն ես խնդրում,—վրայ բերեց Արկադին:—Ձեռ ամաչում:

—Ի հարկէ պէտք է ամաչեմ,—ասաց Նիկալայ Պետրովիչը աւելի ու աւելի կարմրելով:

—Հերիք է, հերիք, հարիկ ջան:—Արկադին անուշ ժըպտաց. «Ցեռ ինչ բանի համար է ներողութիւն խնդրում» մտածեց նա ինչն իրեն, և դէպի իւր բարի ու կակուղ հօրը տածած վեհանձն քնքշութեան զդացմունքը, միախառնուելով մի տեսակ ծածուկ՝ դերակշռութեան զդացողութեան հետ, լցրեց նրա հոգին:

—Հերիք է, ի սէր Աստուծոյ,—նորից կրկնեց նա ակամայ զուարճանալով իւր զարգացած ու աղատ լինելու դիտակցութեամբ:

Նիկալայ Պետրովիչը շարունակում էր շփել իւր ճակատն ու մատների արանքովը որդուն էր մտիկ տալիս, և մի բան ծակեց նրա սիրտը...: Բայց իսկո՞ն էլ նա ինչն իրեն մեղադրեց:

—Ահա, սրանք արդէն մեր արտերն են,—ասաց նա երկարատեւ լուռութիւնից լետով:

—Իսկ այդ դիմացինը կարծեմ մեր անտանն է,—հարցրեց Արկադին:

—Այո: Բայց անտառը ծախել եմ: Այս տարի կտրելու են:

—Ինչո՞ւ էիր ծախում:

—Փող էր պէտք. մանաւանդ որ այդ հողն էլ գեղացոց է անցնելու:

—Այն, որ հարկ չեն տալիս:

—Այդ իրանց բանն է. բայց հո մի օր տալու են:

—Ափսոս անտառ,—նկատեց Արկադին և սկսաւ չորս բոլորքը դիտել:

Այդ տեղերքը, որով նրանք անցնում էին, կարելի չէ ասել, թէ գեղանկար տեղեր էին: Շարունակ, մինչև հորիզոն դաշտեր, անվերջ դաշտեր էին ձգուած, որոնք միայն թեթևակի բարձրանում էին ու նորից իջնում. տեղ-տեղ երևում էին փոքրիկ անտառակներ, և ցանցառ ու ցածրիկ թփերով ծածկուած ոլորապտտոտ ձորակներ, որոնց նմանը

խկապէս նկարուած երևում են Սկատերինալի ժամանակները քաշուած լատակաղծերի վրայ: Պատահում էին նաև խորը փորուած ափերով զետակներ, և անպէտք ամբարտակներով կազմուած լճակներ, և դիւղակներ, որոնց ցածրիկ խրճիթների կտուրները սևացած, լաճախ կիսով չափ քամուց բացուած էին երևում, և ցախահիւս պատերով կալ անելու ծուռած շինութիւններ և դատարկ մնացած մարազի կողքին բացած ահադին դարպաս, և եկեղեցիներ, ոմանք աղլուաչէն ու տեղտեղ ձեւեր թափուած, և ոմանք փայտաչէն, վրալի խաչը թեքուած ու կողքի դերեղմանը ամալացած: Արկադիի սիրտը կամաց կամաց ճմլում էր: Հակառակի պէս հանդիպող գիւղացիներն էլ բոլորը զջլտած էին, անպէտք քոնձրոտ ձիերով. ճանապարհի կողքին բսած եղևնիներն էլ ցնցոտի հագած աղքատների էին նմանում, կեղևները պոկած, ճիւղերը կոտրատած. լղար, վրչոտ, կարծես կրժոտած կովերն ազահութեամբ արածում էին առուների մէջ բուսած արօտը. արնպէս էր թրուում, թէ ասես հէնց նոր ազատուած լինէին մէկի դաժան, մահաբեր ճիրաններից — և այս ուժասպառ կենդանիների կերպարանքը, մի արուպիսի դարնանալին պատուական օր, մարդու աչքերի առաջ, որպէս ուրուական, պատկերացնում էր անմխիթար, անվերջ ձմեռը իւր բուքերով, սառնամանիքներով ու ձիւներով... «Ձէ,—մտածեց Արկադին,—աղքատ երկիր է այս, և ոչ աշխատանք է երևում և ոչ ունեորութիւն. ոչ, ոչ, կարելի չէ այսպէս թողնել, անհրաժեշտ է բարեփոխութիւններ մտցնել... բայց ինչպէս անես այդ... սրտեղից սկսես»...

Այսպէս էր մտածում Արկադին... և մինչդեռ նա խորհում էր, զարուհն իւր անելիքն անում էր: Չորս կողմն ամեն բան կանաչել էր ոսկեւուն, ամեն բան ընդարձակ ու քնքոյզ կերպով լուզում էր ու պսպղում ջերմ քամու շունչով, ամեն բան—ձառ, թուփ, արօտ, ամեն տեղ անվերջ ու հնչուն հոսանքի նման գեղզեղում էին արտուտները. վարի սիրամարդները մէկ ճշում էին հարթ մարգագետինների վրայ սաւառներէս, մէկ լուռ ու մունջ անց կենում կոշտերի վրայով. տուլաչները դբօսնում էին զեռ ցածրիկ դարնանացանի մէջ և քնքոյզ կանաչի միջև սիրուն կերպով սևին տալիս, նրանք կորչում էին հաճարի մէջ, որ արդէն թեթևակի սպիտակել էր, և երբեմն-երբեմն միայն զլուխներն էին երևում ցանի-

Յխագոյն ալիքներն միջից: Արկաղին նալում էր, նալում, և նրա մտքերը կամաց-կամաց թուլանալով անհետ էին լինում... Նա մի կողմ ձգեց վերարկուն և մի այնպիսի զուարթ կերպարանքով, մի այնպիսի ջահել տղի նման մտնի տուեց հօրը, որ սա կրկին գրկախառնեց նրան:

—Շուտով կհասնենք,—նկատեց Նիկալայ Պետրովիչը,—հէնց որ այս բլրակը բարձրացանք, տունը կերևալ: ՔէՖ կանենք, Արկաշա. թէ որ չձանձրանաս, ինձ կօղնես տնտեսական գործերի մէջ: Այժմ հարկաւոր է, որ մենք իրար մօտենանք, միմեանց լաւ հասկանանք, այնպէս չէ:

—Իհարկէ, —ասաց Արկաղին,—բայց ինչ հրաշալի օր է այսօր:

—Գու գալուդ պատճառով է, հողիս: Այս, դարնան ամենալաւ միջոցն է: Ասենք ես համաձայն եմ Պուշկինին,—լիշտամ ես Սեդեհիլ Օնեղինի մէջ:

Գու ինձ համար թախիժ ես բերում,

Սիրոյ եղանակ, ուլ դարուն, դարուն:

Ի՛նչ...

—Արկաղիլ,—կանչեց Բաղարովը տարանտասի միջից,—լուցկի զրկես, լուցկի չկալ որ չիբուխս կպցնեմ:

Նիկալայ Պետրովիչը լուց, իսկ Արկաղին, որ սկսել էր փոքր ինչ զարմացած, բայց և փոքր ինչ համակրանքով ականջ դնել հօրը, շատպով զրպանից արծաթէ տփով լուցկին հանեց ու Պետրի միջոցով ուղարկեց Բաղարովին:

—Սիգար կուղես,—գարձեալ կանչեց Բաղարովը:

—Ղրկի,—պատասխանեց Արկաղին:

Պետրը վերադարձաւ և տփի հետ Արկաղիին տուաւ նաև մի հաստ, սև սիգար. Արկաղին իսկոյն սիգարը կպցրեց և իւր չորս կողմը սկսաւ մի այնպիսի սուր ու թթու ծխախոտի հոտ փռել, որ Նիկալայ Պետրովիչը, որ ամենևին ծխելու սովորութիւն չուէր, ակամայ, բայց որդուն չվիրաւորելու համար աննկատելի կերպով, քիթը միւս կողմ էր շուռ տալիս:

Քառորդ ժամից երկու կառքն էլ կանդ առաւ նոր կառուցուած փայտաշէն տան պատշգամբի առաջ. տունը ներկած էր մոխրագոյն ներկով, իսկ երկաթապատ կտուրը-կարմիր: Հէնց այս էլ Մարլինօն էր, նոյնը Նոր-Շէնը, կամ թէ չէ, զիւղացոց լեղուով, Աղքատ-Ազարակը:

## IV

Աղաներին դիմաւորելու համար տնասուն ծառաների բաղմուտներն չեկաւ, պատշգամբ չթափուեց, մենակ մի տասներկու տարեկան աղջիկ երևաց, իսկ նրա ետևից էլ տնից դուրս եկաւ մի երիտասարդ, որ շատ նման էր Պետրին, և հագած էր բաճկոնակի ձևի սպիտակ, արծուեգորշ կոճակնեւրով մոխրագոյն համազգեստ. սա Պաէլ Պետրովիչ Կիրսանովի սպասաւորն էր: Նա անխօս բաց առաւ ուղեկառքի դռնակը ու լեռ արաւ տարանտասի գոգնոցը: Նիկալայ Պետրովիչը որդու և Բազարովի հետ անցաւ մուտք և համարեա դատարկ դահլիճով, որի դրան ետևից հարևանցի կերպով երևաց մի կանացի երիտասարդ դէմք, և մտաւ ընդունարան, որ արդէն նորագոյն ճաշակով էր կահաւորուած:

—Ըհը, այս էլ մեր տունը,—ասաց Նիկալայ Պետրովիչը զլիտարկը հանելով ու մազերը թափահարելով:—Այժմ առաջի բանն այն է, որ մի լաւ ընթրենք ու հանգստանանք:

—Յիրաւի, վատ չի լինիլ որ մի բան ուտենք,—ձգձգուելով ասաց Բազարովին ու ընկաւ գահաւորակի վրայ:

—Այո, այո. շուտ, շուտ արէք, ընթրիք բերէք:—Նիկալայ Պետրովիչն առանց մի ակնյայտնի պատճառի ոտքը գետնին խփեց:—Ահաւասիկ, ի դէպ, Պրակոֆիչն էլ եկաւ:

Ներս մտաւ մի վաթսուն տարեկան արևոտ, լղար և թուխ մարմնով մարդ. նա հազել էր պղնձէ կոճակներով դարչնագոյն պոչաղգեստ և վզին վարդագոյն թաշկինակ փաթաթել: Նա շրթունքները բացած ժպտաց, մօտեցաւ Արկադիի ձեռքը համբուրեց և, հիւրին գլուխ տալով, գնաց քաշուեցաւ դրան մօտ ու ձեռները ետևը գրած կանգնեց:

—Մի լաւ մտիկ տուր, Պրակոֆիչիչ,—սկսեց Նիկալայ Պետրովիչը:—Վերջապէս եկաւ... Հ'ը, ինչպէ՞ս է:

—Շատ լաւ է, ասաց ծերունին ու նորից ժպտաց, բայց և իսկոյն թաւ լծնքերը կիտեց:—Կհրամայէք, սեղան պատրաստեմ,—ասաց նա լուրջ կերպով:

—Այո, այո, խնդրեմ: Բայց դուք նախ ձեր սենեակը չէք գնայ, Եւգենիյ Վասիլիչ:

—Ոչ, շնորհակալ եմ, կարիք չկայ: Մենակ պատուիրեցէք, որ ճամբրուկս տանեն սենեակս. այ մէկ էլ այս շորս,—աւելացրեց նա վրայի երկար շորը հանելով:

—Շատ լաւ: Պրակտիկը, վեր առ նրանց վերարկուն:

Պրակտիկը կարծես տատանուելով վերցրեց Բազարովի «չորը» և, զլիւից վերև բռնած, ոտքի մատների վրայ հեռացաւ:

—Իսկ դու, Արկադի, մի ըստէ քու սենեակդ կերթաս:

—Այո, պէտք է փոքր ինչ մտքուել, — պատասխանեց Արկադիին և արդէն քալերն ուղղել էր դրան կողմը, բայց արդ ըստէին ներս մտաւ միջակ հասակով, անզլիական մուրթ զգեստ հագած մարդ՝ վզին նոր ձեի ցածլիկ փողպատ, ոտներին լայքաւոր կոշիկ. արդ Պաւէլ Պետրովիչ կիրսանովն էր: Ըստ երևութիւն նա քառասունհինգ տարեկան կլինէր՝ կարծ խուզած սպիտակ մազերը, նոր արծաթի նման, մուրթ փալլ ունէին. դէմքը, որ մաղձոտ էր, բայց կնճիռներից ազատ և սովորականից դուրս կանոնաւոր ու մաքուր, աչնպէս որ կարծես նուրբ ու հմուտ անդրիագործի ձեռքից դուրս եկած լինէր, դարմանալի զեղեցկութեան հետքեր ունէր՝ մանաւանդ շատ սիրուն էին պայծառ, սև, երկարաւուն աչքերը: Արկադիի հօրեղբօր ամբողջ կերպարանքը, որ զեղանկար և աղնուատում պատկեր ունէր, պահպանել էր իւր պատանեկական վաղեկակազմութիւնը և այն՝ հողից հեռանալու, դէպի վերև դնալու ձգտումը, որ մեծ մասամբ քսան տարեկանից լետող անհետանում է:

Պաւէլ Պետրովիչը վարտիքի զրպանից հանեց երկար, կարմրագոյն եղունգներով զարդարուած զեղեցիկ ձեռքը, որ արեակնեայ կոճակաւոր բազպանի քնքով սպիտակութեան պատճառով աւելի ևս զեղեցիկ էր թւում, և մեկնեց եղբօր որդուն: Նախ երոպական «shake hands»-ը կատարելուց լետող նա երեք անգամ, ուստական սովորութեամբ, համբուրուեցաւ նրա հետ, այսինքն իւր հոտեր քսած պէխերովը երեք անգամ կպաւ նրա թշերին ու ասաց. «բարի եկար»:

Նիկալայ Պետրովիչը նրան Բազարովին ներկայացրեց՝ — Պաւէլ Պետրովիչը իւր ճկուն իրանը խոնարհեց ու թեթևակի ժպտաց, բայց ձեռք չտուեց և մինչև անգամ ձեռքը նորից զրպանը դրեց:

—Արդէն սկսել էի կարծել, թէ այսօր այլ ևս չէք գալ, — հաճելի ձայնով ասաց նա՝ սիրալիր շօրօրով, ուսերը վեր զցելով ու սպիտակ, սիրուն ատամները ցոյց տալով: — Ճանապարհին հօ բան չպատահեց...

—Ինչ պիտի պատահէր, — պատասխանեց Արկադիին —

Ֆանապարհին փոքր ինչ (խտաբանք) քսաս տուխնք: Դրա համար էլ ալժմ գալլի նման քաղցած ենք: Հալրիկ, ասա Պրա-  
կոֆիլը շուտ անի, իսկ ես այս բողէիս կզամ:

— Սպասի, ես էլ հետդ դամ, — բացականչեց Բազարովը տեղից վեր թռչելով: Սրկու երիտասարդները դուրս եկան:

— Այս ով է, — հարցրեց Պաւէլ Պետրովիչը:

— Արկաշալի ընկերն է. նրա ասելով մի շատ խելօք մարդ:

— Մեզ մօտ է մնալու:

— Այո:

— Այս երկարամազը:

— Այո, այո:

Պաւէլ Պետրովիչը եղունգներով սեղանին չխչխկացրեց:

— Ինձ թուում է, թէ Արկաշին cést dégourdi, <sup>1)</sup> — նկատեց նա: — Ուրախ եմ նրա գալուն:

Ընթրիքին քիչ խօսեցին: Մանաւանդ Բազարովը համարեա թէ ոչինչ չէր ասում, բայց ուտում էր շատ: Նիկալայ Պետրովիչը զանազան դէպքեր էր պատմում իւր, ինչպէս ինքն էր ասում, ազարակում վարած կեանքից, խօսում էր առաջիկայում կառավարութեան ձեռք առնելիք միջոցների մասին, մասնաժողովների, պատգամաւորների, մեքենաներ մտցնելու և այլ խնդիրների մասին: Պաւէլ Պետրովիչը ծանր-ծանր լետ ու առաջ ման էր գալիս սեղանատան մէջ (նա երեւէք ընթրիք չէր անում), երբեմն-երբեմն բերանին էր տանում կարմիր գինով լի փոքրիկ բաժակը, մի կում առնում, և շատ հազիւ մի որ և իցէ նկատողութիւն կամ, աւելի շատ, այսպիսի բացականչութիւն անում. «հ'ը, ը՛՛ը. հմ»: Արկաշին մի քանի նորութիւններ հազորդեց Պետերբուրգի կեանքից, բայց նա իրեն փոքր անլարմար դրութեան մէջ էր զգում, դա այն անլարմարութիւնն է, որ սովորաբար ամեն երիտասարդ էլ զգում է, երբ արդէն երեխայ լինելուց դեռ նոր դադարած, վերադառնում է այն տեղը, ուր նրան սովոր էին երեխայ տեսնել ու համարել: Նա աւելորդ տեղը ձգձգում էր իւր խօսքը, խոյս էր տալիս «հալրիկ» ասելուց և մինչև իսկ մի անգամ դրա տեղ «հալր» ասաց, թէպէտ նա արդ բառը թի տակ արտասանեց. աւելորդ համարձակութեամբ իւր բա-

<sup>1)</sup> Փոխուել է (դէպի լաւը): Մ. Թ.

ժակի մէջ աւելի գինի ցրեց, քան թէ կուղէր, և բոլոր գինին խմեց. Պրակոֆուլն աչքը նրանից չէր հեռացնում և միայն շրթունքներն էր ծամծմում: Ընթրիքից լետու ամենքն էլ անմիջապէս բաժանուեցան:

— Ի՞նչ տարօրինակ մարդ է եղել հօրեղբայրդ, — ասում էր Բազարովը գիշերազգեստը հագին Արկադիի անկողնի մօտ նստած ու կարճ չիբուխը ծծելով: — Ի՞նչ տնդողութիւն է գիւղի մէջ. Հապա եղունգները. խկը ցուցահանողէս ուղարկելու բան:

— Դու, իհարկէ, չգիտես, — պատասխանեց Արկադին, — թէ նա ի՞նչ անուն է ունեցել իւր ժամանակին: Ուրիշ անգամ նրա պատմութիւնը կպատմեմ քեզ: Ախր ի՞նչ զեղեցիկ տղամարդ է եղել, ինչքան կանալք զփուացրել:

— Հնա՛ս: Ասել է այդ հին հին լիշողութեան մնացորդներն են: Բայց ափսոս որ այտեղ մարդ չկալ, որ գրաւէ: Ես բոլոր ժամանակը նրան էի դիտում — ինչ զարմանալի օձիք ունի, կարծես քարից լինի շինած, կզակն էլ մաքուր ածիլած: Միծաղելի բան չէ, Արկադիյ Նիկալալիչ:

— Ասենք հա, բայց, ճշմարիտ, լաւ մարդ է:

— Դա արդէն հնութեան մնացորդ է: Իսկ հայրդ պատուական մարդ է: Բայց ի զուր է ոտանաւորներ կարդում, և զփուար թէ անտեսութիւնից էլ մի բան հասկանալիս լինիր: Բայց բարի մարդ է:

— Հալրս խկը ոսկի է:

— Նկատեցի՞ր քաշուածը:

Արկադին գլխով արաւ որպէս թէ ինքը չէր քաշուում:

— Չարմանալի մարդիկ են այս հնաւորց օտմանտիկները, — շարունակեց Բազարովը: — Իրենց նեարդալին դրութիւնն այնքան կզարգացնեն, որ գրգռման ստիճանին հասնի... և դրանով էլ խանգարում է հաւասարակշռութիւնը: Սակայն, մնաս բարով: Իմ սենեակումս անգլիական լուացարան է դրուած, մինչդեռ դուռը գոց չունի: Բայց և այնպէս պէտք է այդ բանը քաջալերել — անգլիական լուացարանը, այսինքն առաջադիմութիւնը:

Բազարովը գնաց, իսկ Արկադիին համակեց բերկրութեան զգացմունքը: Ինչքան քաղցր բան է քնել հարեմնի կտրան տակ, ծանօթ անկողնի մէջ, այն վերմակի տակ, որի վրալ աշխատել են սիրելի ձեռներ, գուցէ և դայեակի ձեռները, այդ բարի, քնքոյլ ու անխոնջ ձեռները: Արկադին լիշեց Եգորով —

Նալին և հառաչեց, և ողորմիս տուաւ...: Նա իրա համար չէր աղօթում:

Նա էլ, Բագարոջն էլ շատ շուտով քնեցին, բայց տունը եղողներին միւսները զեռ երկար ժամանակ չէին քնում: Որդու վերադարձը լուրջ էր Նիկալայ Պետրովիչին: Նա անկողին մտաւ, բայց ճրագը չմարեց և, գլուխը ձեռքին լեռնած, խորը միտք էր անում: Նղբալը կէս գիշերը վաղուց անց նստած էր իւր առանձնասենեակում, բաղկաթոռի մէջ, բուխարու դիմաց, որի մէջ կամաց-կամաց քարածուխ էր այրում: Պաւէլ Պետրովիչը չէր հանուել, միայն լայքաւոր սոնամանը հանած չինական անկրունկ կարմիր շտեռ էր հագել: Ձեռին բռնած էր malignani-ի վերջին համարը, բայց չէր կարդում. նա աչքը լաւած նայում էր բուխարուն, որի մէջ երբեմն մարելով և երբեմն բորբոքուելով պլպլում էր կապտաւուն բոցը...: Աստուած դիտէ, թէ որտեղանք էին թափառում նրա մտքերը. բայց նրանք մենակ անցեալի մէջ չէին թափառում`—նրա դէմքի արտայայտութիւնը մտալ էր և ուշադիր, իսկ լոկ անցեալի լիշողութիւններին անձնատուր եղած մարդ այդպիսի արտայայտութիւն չի ունենում: Իսկ ետևի փոքրիկ սենեակում, մեծ սնդուկի վրայ, կապուտ բաճկոն հագած, մուգ մազերի վրայից սպիտակ թաշկինակ ձգած, նստած էր մի նորատի կին, Ֆենիչկան և երբեմն ականջ էր դնում, երբեմն նիրհում, երբեմն էլ մտիկ ասլիս բաց դռանը, որի միւս կողմը երևում էր մանկական մահճակալ և լսում քնած մանկան համաչափ շնչառութիւնը:

## V

Միւս օրն առաւօտեան Բագարոջն ամենքից վաղ զարթնեց և դուրս եկաւ տնից: «Վահ» մտածեց նա իւր չորս կողմը նայելով, «այս էլ գիւղ է էլի»: Երբ որ Նիկալայ Պետրովիչը իւր գիւղացիներից բաժանուելով հողերի սահմանները որոշեց, հարկադրուեցաւ իւր ազարակի համար մի չորս դեսեստին բոլորովին տափարակ ու լերկ դետին լատկացնել: Նա տուն, ազարակ և ծառաների համար բնակարաններ չինեց, պարտէզ զցեց, լճակ ու երկու հոր փորեց. բայց ծառերը լաւ չէին բռնում, լճակում խիստ չքիչ ջուր հաւաքուեց, իսկ ջրհորների ջուրը չորահամ էր: Մենակ լասմիկի ու ակացիալի թփերով շրջապատուած զովանոցն էր աջողուել. այդտեղ երբեմն-երկալրեր և դաւակներ

քեմն թէ՛ էին խմում և ճաշ ուտում: Բաղարովը մի քանի բո-  
պէի մէջ անցաւ բոլոր սւղիներով, գոմ ու ախոռ մտաւ, եր-  
կու ընդոծին երեխայ գտաւ և նրանց հետ խսկոյն էլ բարե-  
ձգամացաւ ու հետները միասին վեր կացաւ գնաց, ազարակից  
մի վերստ հեռու, փոքրիկ ճանճուտը գորտ բռնելու:

— Գորտն ինչիդ է, աղա,—հարցրեց տղերանցից մէկը:

— Այ ինչիս է,—պատասխանեց Բաղարովը, որ մի ա-  
ռանձին ընդունակութիւն ունէր ստորին կարգի մարդկանց  
վտահուճիւնը զբաւելու, թէպէտ երբէք նրանց քէֆովը չէր  
շարժում և հետները արհամարհանքով էր վարում,—ես գորտը  
տափկացնում եմ ու սկսում եմ նայել, թէ ինչ է կատարում  
նրա ներսը. և որովհետեւ ես էլ, դու էլ միևնոյն գորտն ենք,  
միայն թէ մենք ոտների վրայ ենք զալիս, այդ պատճառով էլ  
կարող եմ իմանալ, թէ ինչ է լինում նաև մեր ներսը:

— Եդ ինչիդ է պէտք:

— Որպէս զի, երբ որ հիւանդանաս ու ես բժշկելու լի-  
նիմ, չսխալուեմ:

— Դու դճխուտը ես, ինչ է:

— Հասցն:

— Վայսկա, լսում ես, աղէն ասում է, թէ մենք էլ միև-  
նոյն գորտն ենք: Զարմանք բան:

— Ես գորտից վախում եմ,—ասաց Վայսկան, որ մի եօթ  
տարեկան, վուշի նման սպիտակ մաղերով երեխայ էր. նա  
ոտարտրիկ էր, իսկ հագին ցից եղած օձիքաւոր բաձկոն:

— Ի՞նչ կալ վախենալու, հո չեն կծում:

— Դէ, մտէք ջուրը, փիլիսոփաներ,—ասաց Բաղարովը:

Այդ միջոցին Նիկալայ Պետրովիչն էլ վեր էր կացել ու  
դնացել Արկաղիի սենեակը. Արկաղին արդէն հագնուած, պատ-  
րաստ էր: Հայր ու որդի դուրս եկան պատշգամբ, հովանոցի  
տակը, վանդակապատի մօտ սեղանի վրայ, լասմիկի երկու խո-  
շոր փնջերի միջև արդէն ես էր գալիս հեշտաեռը: Դուրս ե-  
կաւ երէկուայ աղջիկը, որ առաջին անգամ նրանց պատշգամ-  
բում հանդիպել էր, ու բարակ ձայնով ասաց.

— Ֆէդոսիա Նիկալաւեւնան մի քիչ հիւանդ են, չեն կա-  
րող դալ. հրամայեցին որ ձեզ հարցնեմ, ինքններդ կհաճիք թէ՛  
անել, թէ՛ Դուսիւրաչին ուղարկի:

— Ես, ես ինքս կանեմ,—շտապով վրայ բերեց Նիկալայ

Պետրովիչը.—Գու թէլը ինչո՞վ ես խմում, Արկադիւ, սերձով թէ լինո՞նուի:

—Աերով,—սլատասխանեց Արկադիւն, և փոքր ինչ լուս-  
լուց լետով հարցական եղանակով ասաց,—հալրիկ:

Նիկալայ Պետրովիչը շէկուած կերպարանքով նրան նա-  
յեցաւ:

—Ի՞նչ է, — ասաց նա:

Արկադիւն աչքերը ներքև զցեց.

—Ներիբ, հալրիկ, թէ որ հարցմունքս քեզ անտեղի թը-  
ւայ,— ասաց նա,— բայց դու ինքդ քու երէկուայ անկեղծու-  
թեամբ ինձ էլ ստիպում ես անկեղծ լինել... հո չես նեղանալ:

—Ասա:

—Ինձ համարձակութիւն ես տալիս քեզ հարցնելու...:

Արդեօք Ֆեն... արդեօք նրա թէլ անելու չեկածք ա՛յն պատ-  
ճառով չէ՞, որ ես այտեղ եմ:

Նիկալայ Պետրովիչը թեթևակի շուռ տուեց երեսը:

—Գուցէ,— ասաց նա վերջապէս,— նա կարծում է... նա  
ամաչում է...:

Արկադիւն աչքն արագութեամբ հօր վրայ ձգեց:

—Իզուր է ամաչում: Նախ որ քեզ արդէն լատնի է իմ  
մտածութեանս եղանակն (այս խօսքերն ասելիս Արկադիւն  
խիստ դիւրն էր գալիս), իսկ երկրորդ էլ— միթէ ես մի մազի  
չափ անգամ կուղեմ խանդարել քու կենցաղավարութիւնդ,  
քու սովորութիւններդ: Մանաւանդ թէ համոզուած եմ, որ  
դու կարող չէիր վատ ընտրութիւն անել. թէ որ նրան թող  
եւ տուել, որ քեզ հետ միևնոցն լարկի տակ ապրի, ասել է,  
որ ալդ բանին արժանի է. ինչ էլ որ լինի՝ որդին հօր դա-  
տաւորը կարող չէ լինել, մանաւանդ եւ, նամանաւանդ քեզ  
նման մի հօր, որ ոչ մի ժամանակ և ոչ մի բանի մէջ իմ ա-  
զատութիւնս չեւ ճնշած:

Սկզբում Արկադիւնի ձայնը զողողում էր՝ դգում էր, որ  
իւր արածը վեհանձնութիւն է, բայց միևնոցն ժամանակ էլ  
հասկանում էր, որ հօրը զլիւին խրատի պէս մի բան է կար-  
դում. բայց մարդու իրա ձայնը սաստիկ ազդում է իւր վրայ  
և Արկադիւն վերջին խօսքերը հաստատուն, նույն իսկ ազդու  
կերպով արտասանեց:

— Շնորհակալ եմ, Արկաչա, — խուլ ձայնով ասաց Նիկա-  
լայ Պետրովիչը և նրա մատները դարձեալ սկսան ճակատի և

լօնքերի վրայ շարժուել:—Քու ենթադրութիւններդ, արդարև, ուղիղ են: Իհարկէ, եթէ այդ աղջիկն արժանի չլինէր... Սա մի թեթև հաճութի համար չէ արուած: Ինձ համար ծանր է այս մասին քեզ հետ խօսել: Բայց հասկանում ես իհարկէ, որ նրա համար զժուար էր քո եղած ժամանակդ, ահն էլ հէնց առաջին օրը, այստեղ դալ:

—Թէ որ այդպէս է, ապա ես ինքս կդնամ նրա մօտ,— առաց Արկաղին մեծահոգութեան նոր հոսանքով բռնուած և տեղիցը վեր թռաւ:—Սա նրան կհասկացնեմ, որ ամենևին ինձանից քաշուելու բան չկայ:

Նիկալայ Պետրովին էլ վեր կացաւ:

—Արկաղի,—ասաց նա,—ախր... ինչպէս կարելի է... ահնտեղ... Քեզ չեմ ասել, որ...:

Բայց Արկաղին այլ ևս նրա ասածը չէր լսում և վաղեց, գնաց պատշգամբից: Նիկալայ Պետրովինը նրա ետևիցը նախելով մնաց շփոթուած և նստաւ տեղը: Նրա սիրտը բարբախում էր... Արդեօք այդ բողբոջն նրա առաջ իւր և որդու ապագայ լարաբերութեան անխուսափելի տարօրինակութիւնը պատկերացաւ, թէ հասկացաւ, որ Արկաղին աւելի լարզանք ցոյց տուած կլինէր իրեն, թէ որ բոլորովին այս խնդիրը յօշափած չլինէր, կամ թէ զուցէ նա ինքն իրեն կշամբուում էր իւր թուլամորթութեան համար—զժուար էր ասել. այս բոլոր զգացմունքներն էլ կային նրա մէջ, բայց իբրև զգացողութիւն—և ահն էլ իբրև անորոշ զգացողութիւն. իսկ երեսի կարմրութիւնը չէր գնում, և սիրտը բարբախում էր:

Շտապ քայլերի ձայներ լսուեցան և պատշգամբ եկաւ Արկաղին:

—Հայր, մենք ծանօթացանք—բացականչեց նա և նրա դէմքի վրայ փայլեց փաղաքուշ և բարի լաղթանակի արտալատութիւնը:—ձիշտ որ, Ֆեդոսիա Նիկալանան մի քիչ լաւ չէ այսօր, և մի քիչ ուշիկեկ կգայ: Բայց ինչպէս է որ չէիր ասել, թէ ես եղբայր էլ եմ ունեցել: Թէ որ իմանալի հէնց երեկոյեան էլ կգնալի, կհամբուրէի նրան, ալ ինչպէս որ այժմս համբուրեցի:

Նիկալայ Պետրովին ուզում էր մի բան ասել, ուզում էր վեր կենալ տեղից և գիրկը բանալ... Արկաղին ինքը նրա վզովը փաթաթուեց:

—Այս ինչ է, դարձեալ գրկախառնուել էք, — նրանց քա-  
մակից լսուեց Պաւէլ Պետրովիչի ձայնը:

Հայր ու որդի երկուան էլ ուրախ էին նրա գալուն.  
լինում են սրտալուրդ դրուժխիւններ, որոնց միջից բաց և արն-  
ալէս մարդ կցանկանալ շուտով դուրս դալ:

—Ի՞նչ կալ զարմանալու, — ուրախ-ուրախ ասաց Նիկա-  
լալ Պետրովիչը: — Այս ինչքան ժամանակ է Արկաշայի կարօտն  
էի քաշում... Երէկուանից դէսը սկի ժամանակ էլ չէ եղել,  
որ մի լաւ վրան նալեմ, կշտանամ:

— Ամենեկն չեմ զարմանում, — նկատեց Պաւէլ Պետրովի-  
չը, — ես ինքս էլ սլիտի ուրախութեամբ հետը ողջադուրուեմ:

Արկաղիւն մօտեցաւ հօրեղբօրը և նորից երեսին ղզաց  
նրա հոտաւէտ բխերի շօշափումը: Պաւէլ Պետրովիչը սեղանի  
մօտ նստեց: Նա անզլխական ճաշակի նրբանկար շոր էր հա-  
ղել, դլխին փոքրիկ թաս դրել: Այս թասն ու անհող կապած  
փողպատը նշան էին գիւղական կեանքի աղատութեան. բաց  
շապկի պինդ օձիքը, որ ճշմարիտ է, սպիտակ չէր, հապա խալ-  
տապղէտ, ինչպէս որ վալել է առաւօտեալ ղղեստին, ըստ սո-  
վորականին անողորմ կերպով ղէմ էր ընկել սափրած կզակին:

— Ո՞րտեղ է նոր բարեկամը, — հարցրեց նա Արկաղիւնին:

— Տանը չի. սովորաբար նա վաղ է վեր կենում և մի  
որեկից տեղ գնում: Ամենեկն պէտք չէ նրա վրալ ուշադրու-  
թիւն դարձնել — նա շատ ղէս ու ղէն անել չղիտէ:

— Այո, երևում է: — Պաւէլ Պետրովիչն առանց շտապելու  
սկսաւ հացին կարագ քսել: — Շատ է արտեղ մնալու:

— Տեսնենք: Նա հօրն էր գնում և ճամբին եկաւ մեղ մօտ:

— Իսկ հայրը որտեղ է ալրում:

— Մեր նա՛անղում, մեղանից մի ութսուն վերստ հեռու:  
Այնտեղ մի փոքրիկ կալուածք ունի: Առաջ ղինուորական  
բժիշկ է եղած:

— Հճճ... Ես էլ ասում եմ ծանօթ աղգանոււն է — Բաղա-  
ըով... Յիշում ես, Նիկալալ, կարծեմ հալրիկի գնղում Բաղա-  
ըով աղգանոււնով մի բժիշկ կար:

— Կարծեմ կար:

— Այո, ար: Ուրեմն արբ բժիշկը սրա հայրն է: Հըմ: —  
Պաւէլ Պետրովիչը բխերը շարժեց: — Իսկ ինքը, պարոն Բա-  
ղարովն ինքն ինչ բան է իսկապէս, — հարցրեց նա որոշակի:

—Բաղարձին ինչ բան է,—Արկաղիչն ժպտաց.—Ուզում էք, հօրեղբայր, ասեմ նրա խկապէս ինչ բան եղածը:

—Խնդրեմ, շնորհ արա:

—Նա նիհիլիստ է:

—Ի՞նչ,—հարցրեց Նիկալայ Պետրովիչը. իսկ Պաւէլ Պետրովիչը օդի մէջ բարձրացեց դանակը, որի ծալրին մի կտոր կարագ կար, և մնաց անշարժ:

—Նիհիլիստ է,—կրկնեց Արկաղիչն:

—Նիհիլիստ,—ասաց Նիկալայ Պետրովիչը.— Ինչքան խելքս կտրում է, դա լատիներէն nihil, ոչ ինչ բառիցն է. հետեալաբար այդ բառը նշանակում է ահնայիսի մի մարդ, որ... որ ոչինչ չէ ընդունում:

—Ասա՛ որը ոչինչ չի լարդում,—վրայ բերեց Պաւէլ Պետրովիչը, և նորից սկսաւ հացին կարագ քսել:

—Որը ամեն մի բանի քննողաբար է վերաբերում,—նկատեց Արկաղիչն:

—Մէկ բան չէ, ինչ է.—հարցրեց Պաւէլ Պետրովիչը:

—Ոչ, մէկ բան չէ: Նիհիլիստը մի ահնայիսի մարդ է, որ ոչ մի հեղինակութեան առաջ չի խոնարհւում, ոչ մի սկզբունք, ինչքան էլ այդ սկզբունքը լարդանքի արժանացած լինի, չի ընդունում լոկ հաւատքով:

—Եւ ինչ է, այդ լաւ բան է.—ընդհատեց Պաւէլ Պետրովիչը:

—Նախելով թէ՛ սււ համար, Ոմանց համար դա լաւ է, իսկ ոմանց համար՝ շատ վատ:

—Մի՞թէ, էհ, ինչպէս տեսնում եմ, դա մեր խելքի բանը չէ: Մենք հին դարու մարդ ենք և կարծում ենք, որ առանց պրինսիպների (Պաւէլ Պետրովիչն այդ բառը ֆրանսիացոց նման փափուկ, «պրինսիպ» էր արտասանում, մինչդեռ Արկաղիչն, ընդհակառակն, արտասանում էր «Պրը՛նցիպ») և առաջին վանկի վրայ շեշտում), առանց, ինչպէս դու ես ասում, լոկ հաւատքով ընդունուած, պրինսիպների աչք բանալ, շունչ քաշել կարող չենք: Vous avez changé tout cela <sup>1)</sup> Աստուած տալ աջողակ լինիք, իսկ մենք մտիկ կտանք ձեզ ու կուրախանանք, պարոնայք... ինչպէս էր:

—Նիհիլիստներ,—որոշակի ասաց Արկաղիչն:

<sup>1)</sup> Դուք ամեն բան փոխել էք, տակն ու վրայ արել: Մ. Թ.

— Հաւ Առաջ կալին հեղելիստներ <sup>2)</sup>, իսկ ալթմա՝ նիհիլիստներ: Տեսնենք թէ ինչպէս էք դատարկութեան, օղազուրկ տարածութեան մէջ ապրելու. իսկ ալթմ խնդրեմ եղբայր, Նիկալայ Պետրովիչ, զանոց խփիր, արդէն կակաս խմելու ժամանակ է:

Նիկալայ Պետրովիչը զանոց խփեց և զոռաց. «Ի՞նչնա՜նչ», Բայց Ի՞նչնա՜նչ փոխարէն Ֆենիչկան ինքը զուրս եկաւ. Դա մի քսան երեք տարեկան, սպիտակ ու փափլիկ կին էր, թուխ մազով ու աչքերով, կարմիր, մանկական-փքած շրթունքներով ու քնքով ձեռներով: Նա չթէ մաքուր զգեստ էր հագել, կապտազօն նոր ծածկոցը թեթևակի ձգել կըր ուսերին: Նա մի մեծ գաւաթով կակաս բերեց և, Պաւէլ Պետրովիչի առաջը դնելով, շատ ամաչեց՝ ջերմ արիւնը լորձանք տուեց նրա սիրուն դէմքի նուրբ մորթի տակով, և նրա երեսը կարմրատակեց: Ֆենիչկան աչքերը խոնարհեց և կանգ առաւ սեղանի կողքին և բոլորովին մատների ծալքերով լննուեցաւ սեղանին: Թու՛մ էր, թէ նա համ քաշու՛մ էր, որ եկել էր, համ էլ ասես թէ զզու՛մ էր, թէ իրաւունք ունէր դալու:

Պաւէլ Պետրովիչը խստութեամբ լօնքերը կիտեց, իսկ Նիկալայ Պետրովիչը շէլուեց:

— Բարև, Ֆենիչկա, — ասաց նա առամների արանքով:

— Աստուծո՛ւ բարին, — պատասխանեց Ֆենիչկան ոչ-բարձր, բայց հնչուն ձայնով և, աչքի ծալքովը նայելով Արկադիին, որը բարեկամաբար ժպտում էր նրան, կամացուկ զուրս գնաց: Նա փոքր ինչ շօրօրալով էր ման գալիս, բայց ալդ էլ էր նրան սազ գալիս:

<sup>2)</sup> Գէորգ Վիլհելմ Ֆրիդրիխ Հեգելը (1770—1831 թ.) գերմանացի լատին փիլիսոփայ է. նրա վարդապետութեան հիմք կազմում է այն գաղափարը, թէ ամբողջ տիեզերքս պէտք է նկատել մի գեղեցիկ ամբողջութիւն, որի մէջ ոչ միայն ոչ մի անհաշտելի բան չկայ, հապա չկայ նաև մաքառումն, և ամենայն ինչ միայն արտալատութիւն է զարգացման, ուր մի ձև մշտապէս փոխուում է միւս ձևի. տիեզերքս մի ներդաշնակ միութիւն է կազմում, մի օրգանիզմ. ուստի և Հեգելը ամեն մէ երևութի մէջ որոնում է ընդհանուր կապը միւս երևութների հետ: Հեգելի վարդապետութիւնը 30—40-ական թուերին խիստ տարածուած էր Մոսկուայի ինտելիգենտ հասարակութեան մէջ. «ալախանաֆիլ» և «ղապաղնիկ» կոչուած ուղղութիւնները իւրաքանչիւրը իւր տեսակէտով էր ըմբռնում Հեգելի վարդապետութիւնը... Մ. Թ.

Մի առ վարկեան պատշգամբում լուսթիւն տիրեց: Պաւէլ Պետրովիչը իւր կակաօն էր խմում, և լանկարծ գլուխը բարձրացրեց:

—Ահաւասիկ պարօն Նիհիլիստն էլ շնորհէ՞ բերում ալստեղ,—ասաց նա ցած ձայնով:

Յիրաւի, պարտիզում, ծաղկանոցների վրայից անցնելով, զալիս էր Բաղարովը: Նրա կտաւէ վերարկուն ու վարտիկը ցեխոտուել էին. ճանճալին կպչուն բոյսը փաթաթուել էր նրա հին, կլոր գլխարկին. աջ ձեռքին բռնած էր մի փոքր տոպրակ. տոպրակի մէջ մի կենդանի թռչուն էր շարժում: Նա արագութեամբ մտեցաւ պատշգամբին և, գլխով անելով, ասաց.

—Բարով ձեզ, պարօններ. ներեցէք, որ թէլի ուշացաւ. ալս բոպէլին կգամ. հարկաւոր է ալ ալս գերլիններին տեղաւորել:

—Այդ ինչ է, տղո՞ւկ է, —հարցրեց Պաւէլ Պետրովիչը:

—Ոչ, գորա է:

—Գորտն ուտում էք թէ բաղմացնում:

—Փորձի համար է, —անտարբերութեամբ պատասխանեց Բաղարովը ու տուն դնաց:

—Նա ալդ գորտերը պիտի սկսի կտրատել,—նկատեց Պաւէլ Պետրովիչը:—Պրինսիպի չի հաւատում, իսկ գորտի հաւատում է:

Արկաղին ցաւակցարար մտիկ տուաւ հօրեղբօրը, Նիկալայ Պետրովիչն էլ ծածուկ ուսերը վեր դցեց: Պաւէլ Պետրովիչը ինքն էլ հասկացաւ, որ արածը անաջող սրախօսութիւն էր, և սկսաւ խօսել տնտեսութեան ու նոր կառավարչի վրայ, որը նախօրեկին եկել, զանգատուել էր, թէ բանուոր Ծաման արբեցութիւն է անում և բոլորովին խարաբ է եղել...:

## V I

Բաղարովը եկաւ, սեղանի առաջ նստեց և սկսաւ շտապով թէլ խմել: Երկու եղբայրներն էլ լռիկ նրան էին նստում, իսկ Արկաղին աչքի տակովը մէկ հօրն էր մտիկ տալիս, մէկ հօրեղբօրը:

—Հեռու դնացէք,—հարցրեց վերջապէս Նիկալայ Պետրովիչը:

—Այստեղ, ձեր կաղամախի պուրակի մօտի ճանճուտը: Մի

Քինդ հատ կտցար թռան առաջիցս. Արկաղի, կարող ես սպանել:

— Իսկ դուք որտորդ չէք:

— Ոչ:

— Դուք խկապէս ընազիտութեամբ էք զբաղուում, — իւր հերթին հարցրեց Պաւէլ Պետրովիչը:

— Բնազիտութեամբ, այո. առ հասարակ ընական գիտութիւններով:

— Ասում են վերջին ժամանակներս գերմանացիները խիստ առաջ են գնացել այդ կողմից:

— Այո. գերմանացիներն այդ կողմից մեր վարժապետներն են, — անհոգարար պատասխանեց Բազարովը:

— Այդքան բարձր համարում ունիք գերմանացիների վրայ, — վերին աստիճանի քաղաքավարութեամբ ասաց Պաւէլ Պետրովիչը: Նա սկսել էր ներսից զայրանալ: Բազարովի չափազանց աղատ վարմունքը վրդովում էր նրա ազնուական բնավարութիւնը: Այս հաքիմի որդին ոչ միայն չէր քաշուում, հասկա մինչև անգամ պատասխանն էլ ակամայ և կարճ էր տալիս, և ձայնի մէջ էլ մի սեսակ կոպիտ, լանդուզն բան կար:

— Այնտեղի գիտնականներն իրենց գործը հասկացող մարդիկ են:

— Լաւ, լաւ: Հապա ռուս գիտնականների մասին, այդքան լաւ համարում չունիք իհարկէ:

— Հէնց այդպէս էլ է:

— Այդ խիստ գովելի անձնուրացութիւն է, ասաց Պաւէլ Պետրովիչը իրանն ուղղելով ու գլուխը լետ գցելով: — Հապա ինչ էր Արկաղի Նիկալալիչը նոր ասում, թէ ոչ մի հեղինակութիւն չէք ընդունում: Գերմանացի բնագէտներին չէք հաւատում:

— Եւ ինչո՞ւ պիտի հեղինակութիւն ընդունեմ: Եւ ինչ բանի պիտի հաւատամ: Թէ որ խելքի նստելու մի բան կասեն՝ կհամաձայնեմ. պրծաւ գնաց:

— Իսկ գերմանացիները բոլորն էլ խելքի նստելու բան են ասում, — ասաց Պաւէլ Պետրովիչը, և նրա դէմքը մի ալնապիսի անտարբեր, անհոգ արտալատութիւն ստացաւ, որ կարձեռ ամբողջապէս խորասուղուած լինէր երկնային բարձունքների մէջ:

— Ոչ, ամենքը չէ: — փոքր ինչ յորանջելով պատասխա-

նեց Բաղարովը, որ ակնբախնի կերպով չէր ցանկանում վէճը շարունակել:

Պաւէլ Պետրովիչը Արկաղիին նայեցաւ, կարծես ուղում էր ասել. «խօսք չունիմ, շատ մարդավարի բարեկամ ես ունեցեր»:

— Իսկ ինչ վերաբերում է ինձ,— նորից խօսեց նա աշխատելով իրեն զսպել,— ես, ինչ մեղքս պահեմ, գերմանացիներին չեմ սիրում: Էլ ոռոտական գերմանացիներին մասին չեմ խօսում, արդէն լատնի է նրանց ինչ պտուղ եղածը: Հէնց Գերմանիայի գերմանացիներին էլ չեմ հաւանում: Առաջուալ գերմանացիները դեռ էլի մէկ բան էին. այն ժամանակ ունէին Շիլլեր, Գ. է. օ. տ. է. է, ինչ է...: Մանաւանդ եզրալու առանձնապէս սիրում է նրանց...: Իսկ այժմս դուրս են եկել ինչ որ քիմիկոսներ ու մատերիալիստներ (նիւթապաշտներ)...

— Կարդին քիմիկոսը քսան անգամ օդտակար է ձեր բանաստեղծներին,— ընդհատեց Բաղարովը:

— Միթէ,— ասաց Պաւէլ Պետրովիչն ու, ասես թէ քնիւ մէջ ընկնելով, լոնքերը մի քիչ վերեւ բարձրացրեց. — Ասել է դուք գեղարուեստ չէք ընդունում:

— Փող վստատակելու արուեստը, կամ թթախտի վախճանը,— արհամարհական ծաղրով բացականչեց Բաղարովը:

— Լաւ է, լաւ է: Ուրեմն այսպիսի հանաքներ էլ էք գիտացել: Ասել է թէ դուք այս ամենը մերժում էք: Լաւ: Ուրեմն դուք մենակ գիտութեան էք հաւատում:

— Արդէն ձեզ առացի, թէ ոչնչի չեմ հաւատում. և ինչ բան է գիտութիւն ասածդ— ընդհանրապէս գիտութիւնը: Կան գիտութիւններ, ինչպէս որ կան նաեւ արհեստներ, կոչումներ. իսկ ընդհանուր առմամբ գիտութիւն ասած բանդ բոլորովին գոյութիւն չունի:

— Շնտ լաւ: Իսկ հապա՞ ուրիշ, մարդկային կենցաղավարութեան մէջ ընդունուած հաստատութիւնները, դրանց վերաբերմամբ էլ այդպիսի բացասական ուղղութեան էք հետեւում:

— Սա ինչ բան է, հարց ու փոք է,— հարցրեց Բաղարովը:

Պաւէլ Պետրովիչը թեթեւակի սպրդեց...: Նիկալայ Պետրովիչը հարկ համարեց խօսակցութեանը միջամտել:

— Այդ մասին, սիրելի Սեդենիլ Վասիլիչ, մի ուրիշ անգամ աւելի մանրամասն կերպով կխօսենք. ձեր կարծիքներն էլ կիմանանք, մերն էլ կլատնենք: Շատ ուրախ եմ, որ բնա-

կան դիտութիւններով էք պարագում, Նսել եմ, որ Լիբիխը<sup>1)</sup> դարմանակի գիւտեր է արել հողը պարարտացնելու վերաբերմամբ, Գուք կարող էք ինձ գիւղատնտեսութեան մէջ օգնել, կարող էք մի որեւիցէ օգտակար խորհուրդ տալ:

— Սա պատրաստ եմ, Նիկալայ Պետրովիչ, բայց մենք որտեղ, Լիբիխը որտեղ: Առաջ պէտք է դեռ այլ ու բնը սովորել, որ լետով ձեռներս գիրք բռնել կարողանանք. իսկ մենք դեռ սեր սպիտակից ջոկել չենք կարողանում:

«Ինչպէս տեսնում եմ, ճիշտ որ դու նիհիլիստ ես եղել» մտածեց Նիկալայ Պետրովիչը:— Բայց և այնպէս թող տուէք որ հարկաւոր դէպքում ձեր օգնութեան դիմեմ, — աւելացրեց նա բարձր ձայնով:— Իսկ այժմ, եղբայր, վեր կաց գնանք կառավարչի հետ բաններս տեսնենք:

Պաւէլ Պետրովիչը վեր կացաւ աթոռից:

— Հն, — սասց նա առանց որեէ մէկին նախելու, — կատարեալ դժբաղտութիւն է այսպէս մի հինգ տարի գիւղում, հանձարներից հեռու ապրելը: Ախմախ էլ կլնաս: Գու աշխատում ես չմոռանալ այն, ինչ որ սովորել ես, բայց, մէկ էլ տեսար բանից դուրս եկաւ, որ այդ ամենը անմտ բաներ են եղել, որ խելօք մարդիկ աղպլիսի չնչին բաների վերայ զուլս չեն ցաւաղնում, և թէ մենք մի անպէտք փալաս ենք դարձել: Ի՛նչ արած: Երեւի երիտասարդութիւնը, արդարեւ, մեզանից խելօք է:

Պաւել Պետրովիչը կրնկի վրայ ծանր-ծանր շուռ եկաւ ու ծանր-ծանր էլ դուրս գնաց. Նիկալայ Պետրովիչն էլ նրա հետեից գնաց:

— Ի՛նչ է, նա միշտ այսպէս է, — սառն կերպով հարցրեց Բազարովը, երբ որ երկու եղբայրների քամակից դուռը փակուեց:

<sup>1)</sup> Սուստուս Լիբիխը (1803—1873 թ.) գերմանացի հռչակաւոր քիմիկոս է, որի ձեռքի տակ կրթուել ու անուն են ստացել ներկալիս նշանաւոր քիմիկոսներից շատերը: Լիբիխը իւր հետազօտութիւններով ու գիւտերով հսկայական զարկ տուաւ ոչ միայն քիմիայի, այլ և բնախօսութեան և գիւղատնտեսութեան առաջադիմութեան, և դժուար թէ լինի սի այլ գիտնական, որ այնքան մեծ և անմիջական ներդրութիւն ունեցած լինի մարդկանց կեանքի նիւթական պայմանները բարուքելու վրայ, ինչքան Լիբիխը: Մ. Թ.

— Գիտես՛, Եւզենիլ, դու էլ չափազանց խիստ կերպով վարուեցիր հետը, — նկատեց Արկադին: — Նրան վիրաւորեցիր:

— Ձէ, այդ էր պակաս, որ հիմի դրանց, այդ գաւառակահաւաղնուականներին էլ երես տալիս Ախր չգիտես, այդ բոլորը անձնասիրութիւն է, առիճալին սովորութիւններ, անձնահաճութիւններ են: Թէ որ այդպիսի ձգտումներ ունի, թող աչն ժամանակ Պետերբուրգ մնար... Էհ, տէրը նրա հետ Գիտես, մի հազուադիւս ջրալին միջատ, *Ditiscus marginatus* եմ գտել: Յոյց տամ:

— Քեզ խոստացել էի նրա պատմութիւնը պատմել, — սկսեց Արկադին:

— Միջատի պատմութիւնը:

— Հերիք կատակ անես: Հօրեղբորս պատմութիւնը, Ատեսնես, որ նա անչէ, ինչ որ կարծում ես: Նա աւելի ցաւաւիցութեան արժանի է, քան ծաղրի:

— Ձեմ վիճում: Բայց ինչ ես դրա ետխից կպել:

— Պէտք է արդարամիտ լինել, Եւզենիլ:

— Ա՛յդ ինչիցն է հետեում:

— Ձէ, լսիր...

Եւ Արկադին պատմեց իւր հօրեղբոր պատմութիւնը: Ընթերցողն այդ պատմութիւնը լաջորդ զլխում կ'գտնի:

## VII

Իւր կրտսեր եղբոր Նիկալալի նման Պաւէլ Պետրովիչ Վիրսանովն էլ իւր նախնական կրթութիւնը ստացել է տանը, իսկ լետոյ ուսել է զինուորական ուսումնարանում (Պաթսկի կորպուս) <sup>1)</sup>: Մանկութիւնից զարմանալի գեղեցիկ էր. մանաւանդ որ նաև անձնապատահ էր, փոքր ինչ հեղնող և մի տեսակ դուարճալի—մաղձոտ—նա չէր կարող դիւր չգալ: Հէնց որ սպալ դարձաւ, սկսաւ ամեն տեղ էլ մտնել-դուրս գալ: Նրան ձեռքէ ձեռք էին խլում և նա ինքն էլ իրեն երես էր տալիս, մինչև անգամ չարութիւններ էր անում, մինչև անգամ

<sup>1)</sup> Ալէքսանդր I-ի օրով Պետերբուրգում հիմնուած զինուորական ուսումնարան, ուր ընդունուած են միայն վաստակաւոր անձանց զաւակները՝ կայսերական հրամանով: Ուսումնարանը վեցամեայ դասընթաց ունի և աւարտողները սպալ են շուրս գալիս: Մ, Թ.

կոտորատուում էր: Բայց այդ էլ էր նրան սաղ գալիս: Կանաչքեռտեղը դժուր էին, տղամարդիկ նրան անձնահաճ էին անուանում ու իրենց սրտումը նախանձում: Ինչպէս արդէն ասած է: Նա իւր եղբորը հետ միատեղ մի ընակարանում էր ապրում և նրան անկեղծօրէն սիրում էր, թէպէտ ամենևին նրան նմանութիւն չուներ: Նիկալայ Պետրովիչը թեթևակի կաղին էր տալիս, ունէր մանր ու հաճելի դիմագծեր, բայց մանր, փոքր ինչ թախծալի սև աչքեր ու ցանցառ մազ. նա հաճութեամբ ծուլանում էր, բայց և մեծ հաճութեամբ էլ ընթերցանութեամբ պարապում, և հասարակութեան մէջ մտնելուց վախենում էր: Պաւէլ Պետրովիչը ոչ մի երեկոյ տանը չէր մնում, համարձակ և ճարպիկ մարդու հոչակ ունէր (ոարձր հասարակութեան երիտասարդների մէջ մարմնամարզութիւնը նրա շնորհիւ մոզ էր դարձել) և ընդ ամենը հինգ, վեց հատ Ֆրանսերէն գիրք էր կարդացել: Քսանութ տարեկան միջոցին արդէն կապիտան էր. փալուէն ապագայ կար առաջը: Յանկարծ ամեն բան փոխուց:

Այդ միջոցներին Պետերբուրգի բարձր կարգի հասարակութեան մէջ երբեմն-երբեմն երևում էր մի կին, որին մինչև օրս էլ չեն մոռացել. իշխանուհի կին էր: Նա բարեկիրթ ու վախելուչ, բայց փոքր ինչ պակասամիտ ամուսին ունէր, բայց երեխայ չուներ: Այդ իշխանուհին մէկ տեսար՝ լանկարծ արտասահման կգնար, մէկ էլ տեսար՝ լանկարծ Ռուսիա կվերադառնար, մի խօսքով տարօրինակ կեանք էր վարում: Նա թեթևամիտ ու նազկիթող կնոջ անուն ունէր, մեծ լափշտակութեամբ անձնատուր կ'լինէր ամեն տեսակ զուարճութիւնների, մինչև թալկութեան աստիճանի կ'պարէր, հանաքներ կանէր ու կչլչալի կծիծաղէր երիտասարդների հետ, որոնց կընդունէր ճաշերքից առաջ կիսախաւար ընդունարանում, իսկ գիշերները լաց կ'լինէր և կ'աղօթէր, ոչ մի տեղ հանգիստ չէր գտնիլ, իսկ շատ անգամ էլ մինչև լոյս իւր սենեակի մէջ դէս-դէն կ'ընկնէր, թախձազին մատները կ'տրորէր, կամ թէ չէ, բոլորովին դժգոյն ու սառը, կ'նստէր, սաղմոս կ'կարդար: Բայց գիշերն անցաւ թէ չէ, նա դարձեալ նստն աշխարհիկ կինն էր, դարձեալ հիւր կ'գնար, կ'ծիծաղէր, կ'շտտախօսէր և ասես թէ ընդառաջ կ'սլանար ամեն բանի, որ իրեն կարող էր ամենաչնչին հաճութեւ պատճառել: Զարմանալի գեղեցիկ կազմուածք ունէր՝ ոսկու նման ծանր ոսկեգոյն հիւսը ծնկերից ցած էր

իջնում, բայց ոչ ոք նրան զեղեցիութիւն չէր անուանիլ. ամբողջ դէմքի վրայ միակ զեղեցիկը նրա աչքերն էին, և նոյն իսկ բուն աչքերն էլ չէին-աչքերը մանր էին ու գորշ-հաօպ աչքերի հալեացքը. արագ և խորը, խիղախութեան աստիճան անհոգ և թախծութեան աստիճանի մտախոհ,-խորհրդաւոր հալեացք: Մինչև անգամ այն ժամանակ, երբ նրա լեզուն ամենադատարկ խօսքեր էին բլբլում, նրա հալեացքի մէջ մի տարօրինակ բան էր փալլում: Հագնուածքը շատ նուրբ էր:

Պաւէլ Պետրովիչը նրան հանդիպեցաւ մի պարահանդիսի մէջ, հետը մազուրկա պարեց, որի միջոցին իշխանուհին ոչ մի խելացի խօսք չստաց, բայց Պաւէլ Պետրովիչը սաստիկ սիրահարուեցաւ նրան: Յաղթանակների սովոր լինելով, նա ալտուղ էլ շուտով իւր նպատակին հասաւ, բայց լաղթութեան հեշտութիւնը չստեղծեց նրան: Ընդհակառակն, աւելի ևս չարատանջ, աւելի ևս պինդ կերպով կապուեցաւ այն կնոջ հետ, որի մէջ, մինչև անգամ այն միջոցին, երբ նա անդարձ կերպով անձնատուր էր լինում, կարծես դեռ դարձեալ մնում էր մի տեսակ ըղձալի և անմատչելի բան, որին ոչ ոք կարող չէր արժանանալ: Ի՞նչ էր ընակալած այս հոգու մէջ—Աստուծուն է լալտնի: Թուում էր թէ նա դտնուում էր իրեն էլ անչափ խորհրդաւոր զօրութիւնների իշխանութեան տակ, այդ զօրութիւնները ինչպէս ուղէին, այնպէս էլ խաղ կանէին հետը. նրա մանրիկ ուղեղը չէր կարողանում դրանց քմահաճոյքներին դիմադրել: Նրա բոլոր վարմունքն անհեթեթութիւնների մի շարք էր. միակ նամակները, որ կարող էին ամուսնու արդարացի կասկածը լարուցանել, նա զրեւ էր մի մարդու, որ համարեա թէ իրեն անծանօթ էր, իսկ սէրը նրա մէջ միայն թախիծ էր առաջացրել՝ ալլ ևս չէր ծիծաղում և ճանաքներ չէր անում այն մարդու հետ, որին ընտրել էր, և նրա ասածներին ականջ դնելու ու նրան մտիկ տալիս վարանման մէջ էր ընկնում: Երբեմն, մեծ մասամբ լանկարծակիլ այդ վարմունքը սառն սարսափի էր փոխարկւում. դէմքը մոռելատիպ և վալրենի արտալատութիւն էր ստանում. նա քաշում էր իւր ննջարանը, դուռը գոցում, և սպասուհին ականջը դրան կպցրած կլսէր նրա խուլ հեկեկանքը: Կիրսանովը, շատ անգամ, քնքոյշ տեսակցութիւնից տուն վերադառնալուց չետոյ, իւր մէջ զգում էր այն դառն ու սրտամաշուկ ցատուժը, որ մարդուս սրտում առաջանում է, երբ որ նա վերջնական

անաջողութեան է հանդիպում: «Ել ինչեւ ուղում», հարցնում էր նա ինքն իրան, իսկ սիրտը շարունակ մարմաջում էր (խոստում էր): Նա մի անգամ իշխանուհուն նուիրեց մի մատանի, որի ակի վրայ սֆինկսի պատկեր էր վորագրած:

—Այս ինչ է,—հարցրեց իշխանուհին,—սֆինկս է:

—Այո,—պատասխանեց նա,— և այդ սֆինկսը՝ դուք էք:

—Մո,—հարցրեց իշխանուհին, և իւր խորհրդաւոր հալեացքը դանդաղ կերպով բարձրացրեց նրա վրայ:—Գիտէք, որ ինձ համար շատ նպաստաւոր է այդ բանը,—աւելացրեց նա թեթև հեղնութեամբ, իսկ հայեացքը դարձեալ նոյն տարօրինակութիւնն էր արտայայտում:

Մանր էր Պաւէլ Պետրովիչի վիճակը մինչև անգամ այն ժամանակ, երբ իշխանուհի Ռ-ը նրան սիրում էր. բայց երբ որ իշխանուհին սառեց, իսկ այդ բանը բաւական շուտ պատահեցաւ, քիչ էր մնում նա խելքը կորցնէր: Նա տանջուած էր ու խրոււմ, և իշխանուհուն հանգիստ չէր տալիս ու ամեն տեղ ետեւիցը թրև գալիս. այդ բանը ձանձրացրեց իշխանուհուն և նա արտասանման գնաց: Պաւէլ Պետրովիչը, չնայելով իւր բարեկամների խնդիրներին, իւր մեծաւորների խրատներին, թողեց պաշտօնն ու իշխանուհու ետևից գնաց. չորս տարի օտար աշխարհներում անցկացրեց, որի միջոցին նա երբեմն սլանում էր սիրուհու քամակից, իսկ երբեմն էլ դիտամբ նրա հետքը կորցնում. նա ինքն իրենից ամաչում էր, իւր փոքրոգութեան վրայ զայրանում... բայց ինչ օգուտ, իշխանուհու կերպարանքը, այդ անհասկանալի, համարեա անխորհուրդ, բայց դիւթական կերպարանքը չափազանց խորն էր տպաւորուած նրա հոգու մէջ: Բաղենում նրանք նորից առաջուպ նման մտեցան իրար. թւում էր, թէ երեք իշխանուհին այդպէս բուռն կերպով սիրած չէր նրան... բայց մէկ ամսից արդէն ամեն բան վերջացած էր՝—բոցը մի վերջին անգամ էլ բորբոքուեց և առ միշտ հանգաւ: Զգալով, որ անջատումն անխուսափելի է, Կիրսանովն ուղում էր, որ գէթ բարեկամ մնալ, կարծես թէ կարելի էր մի այսպիսի կնոջ հետ բարեկամութիւն հաստատել... Իշխանուհին թաքուն հեռացաւ Բաղէնից և այնուհետև միշտ խոյս էր տալիս նրանից: Պաւէլ Պետրովիչը վերադարձաւ Ռուսիա, փորձեց առաջուպ նման կեանք վարել, բայց այլ ևս նախկին ընթացքը չկարողացաւ բռնել: Նա մկնդեղ կուլ տուած մարդու նման

չարունակ մէկ տեղից միւս տեղ էր թափառում. նա դեռ արցելու թիւններ էր անում, պահպանել էլ աշխարհիկ մարդու բոլոր սովորութիւնները, կարող էր իւր երկու, երեք նոր լաղթանակներով պարծենալ. բայց այլ ևս ոչ մի նոր բան չէր սպասում ոչ իրենից, ոչ ուրիշներից, և ոչ մի բանի չէր ձեռնարկում: Նա ձերացաւ, ալեորուեց, իրիկունները նստել կլուրում, մաղձոտ տրամադրութեան մէջ ձանձրանալ, ամուրիները շրջանում անտարբեր կերպով վիճարանել—նրա համար կարիք էր դարձած,—որ, ինչպէս լատինի է, վատ նշան էր: Իհարկէ, ամուսնանալ մտքովն անդամ չէր անցկացնում: Տասը տարի անցաւ արայէս անդոն, անպտուղ և արագ, չափազանց արագ: Ոչ մի տեղ ժամանակն արայէս արագ չի վաղում, ինչպէս Ռուսիայում. ատում են, որ բանտում ժամանակն ակելի ևս արագ է անցնում: Մի անգամ ժողովարանում ճաշի ժամանակ Պաւէլ Պետրովիչն իմացաւ, որ իշխանուհի Ռ-ը վախճանուել է: Վախճանուել էր Պարիզում համարեա խելագարութեան մօտիկ վիճակում: Պաւէլ Պետրովիչը վեր կացաւ սեղանից և երկար ժամանակ թափառում էր ժողովարանի սենեակներում, արձանացած կանգնում թուղթ խաղացողները սեղանների մօտ, բայց սովորականից վաղ տուն չվերադարձաւ: Մի քիչ ժամանակից լետոյ նա իւր հասցէին մի ծրար ստացաւ.—ծրարի մէջ իշխանուհուն նուիրած մատանին էր: Իշխանուհին սփինկսի վրայ խաչ էր քաշել և պատուիրել էր նրան ստելու, որ սփինկսի բացատրութիւնը—խաչն է:

Այս բանը պատահեցաւ 48 թուականի սկզբին, հէնց այն միջոցին, երբ Նիկալայ Պետրովիչը ամուսնուց զրկուելով Պետերբուրգ էր եկել: Համարեա այն օրուանից, որ Նիկալայ Պետրովիչը բնակութիւն էր հաստատել զիւղում, Պաւէլ Պետրովիչը համարեա թէ իւր եղբոր հետ տեսնուած չէր—Նիկալայ Պետրովիչի պսակադրութիւնը եղել էր հէնց այն օրերին, որ Պաւէլ Պետրովիչը նոր էր ծանօթացել իշխանուհու հետ: Արտասահմանից վերադառնալուց լետոյ նա գնացել էր իւր եղբոր մօտ, որպէս զի մի երկու ամիս մնալ արնտեղ, նրա երջանկութեամբը ուրախանալ, բայց միայն մի շաբաթ էր կարողացել մնալ: Երկու եղբայրների դրութեան մէջ տարբերութիւնը խիստ մեծ էր: 48 <sup>1)</sup> արդ տարբերութիւնը պակասեց՝

1) 1848 թուականից մարտի 1-ին ընդհանուր լեղափոխու-

